

Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի հարցաշար - 2020 թ.

Տևողությունը՝ 150 րոպե

9-րդ դասարան

Գյուղում մի **ամբարիշտ** տղա էր ապրում՝ **հիշաչար**, անգուսպ ու **հավակնոտ**: Երբ ամենքը երես թեքեցին նրանից, գնաց տարեց իմաստունի մոտ՝ խորհուրդ հարցնելու:

Ծերունին համբերատար լսեց պատանուն, ապա տվեց մեխերի մի տուփ և ասաց.

– Մեկական մեխ խփի՛ր ծառին, երբ յուրաքանչյուր անգամ **հանիրավի** վիրավորես, **անարգես** կամ քամահրանքով վերաբերվես մարդկանց: Կհանդիպենք, երբ տուփը դատարկվի:

Տղան վերցրեց տուփն ու մտամոլոր հեռացավ:

... Բակում կանգնած ծառը օրեր շարունակ հառաչեց մեխերի սուր ծակոցներից:

Եվ մի օր տղան **ակնկոր** կանգնեց ծերունու առջև՝ դատարկ տուփը ձեռքին:

– Այժմ պետք է մեկ-մեկ հանես մեխերը, եթե կարողանաս սանձել հոգումդ բուն դրած չարությունը: Եղի՛ր **անաչառ** ու **վեհանձն**, գթասիրտ ու ներողամիտ: Հիշի՛ր աստվածաշնչյան ոսկե կանոնը:

Մտքում պահած ողջամիտ ու **շրջահայաց** ծերունու խրատները՝ պատանին հետզհետե փոխվեց, և ... մեխերը կրկին հայտնվեցին տուփի մեջ:

– Ճիշտ է, դու կարողացար փոխել բնավորությունդ, բայց, ավա՛ղ, – ցույց տալով խոցոտված ծառը՝ **անձկությամբ** ասաց իմաստունը, – տարիներ էլ անցնեն՝ ...

1. Շարունակի՛ր անավարտ միտքը 1-2 նախադասությամբ: (2 միավոր)
2. Մեկնաբանի՛ր առակի իմաստը 2-3 նախադասությամբ: Գրի՛ր իմաստին համապատասխանող առած կամ ասացվածք: (3 միավոր)
3. Շարադրի՛ր «Աստվածաշնչի» ոսկե կանոնը: (1 միավոր)
4. Մեկնաբանի՛ր «Առյուծը, որը հաղթում է իր թշնամուն, փոքրիկ հերոս է այն առյուծի համեմատ, որ հաղթում է ինքն իրեն»: (1 միավոր)
5. Գրի՛ր տեքստում ընդգծված բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
6. Տեքստից դո՛ւրս գրիր փոխաբերական իմաստով գործածված նախադասությունները: (1 միավոր)
7. Ընդգծի՛ր այն բառերը, որոնք կարող են բառակապակցություն կազմել կամ գործածվել *պատանի* բառի հետ. տամուկ, նպատակամետ, սառսռուն, դյուրաբորբոք, սրտմաշուկ, աննկուն, հպանցիկ, քմահաճ, բարկ, նրբանկատ, կերկերուն, խոհուն, դյուրին, քննախույզ, տարտամ, մարդախույս, շինծու, հանդուգն, հարմարավետ, միօրինակ, հաշվենկատ, լռելյայն, վիատ, բորբ, թախծախառն: (2 միավոր)
8. Բացատրի՛ր «սպիտակ ագռավ» թևավոր խոսքը: Կազմի՛ր նախադասություն: (2 միավոր)
9. Գրի՛ր շարադրություն «Հայաստան ասելիս...» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)